Որքա՞ն է Կառավարության նախաձեռնած կառուցվածքային փոփոխությունների արժեքը:

(Հակիրճ հաշվետվություն)

Երևան 2018

Մամուլում շրջանառվում է, որ կառավարությունը նախաձեռնում է կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես 17 նախարարություններից մնալու են 12-ը: Շրջանառվում է, որ կառուցվածքային փոփոխությունը վերաբերվելու է հետևյալ 5 նախարարություններին, որոնք նախատեսվում է միացման ձևով վերակազմակերպել

- Գյուղատնտեսության նախարարություն
- Մշակույթի նախարարություն
- Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- Սփյուռքի նախարարություն
- Բնական պաշարներ և էներգետիկա:

Հիմք ընդունելով այս ելակետային տվյալները մեր ՀԿ կողմից բաց տվյալների ուսումնասիրության հիման վրա փորձ ենք կատարել գնահատել հարցի արժեքը:

Որքան աշխատողի կարող են վերաբերվել առաջարկվող փոփոխությունները՞:

Բյուջեի ուսումնասիրության արդյունքում[1] նկատում ենք, որ պետական իշխանությունում աշխատողների թիվը 2018թ պետբյուջեով նախատեսվել է 18414 աշխատող: 2019թ պետբյուջեով նախատեսվում էր, որ այն կկազմի 18457 (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Պետական իշխանության մարմինների համեմատական ըստ պետբյուջեի

	2018թ բյուջե	2019թ բյուջե
Պետական իշխանության մարմիններում աշխատողներ	18414	18457

Նույն աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ 5 մարմիններում աշխատում են շուրջ 630 մարդ կամ պպետական կառավարման մարմիններում աշխատողների 3.4 տոկոսին (տես աղյուսակ 2):

[1] http://www.minfin.am/website/images/website/byuje%20ev%20krknaki%20harkum/byuje_uxerdz/Bacatragri%20havelvacner.rar

POLICYOBSERVER NCPPR

Աղյուսակ 2.Կառուցվածքային փոփոխություններում ներառված կառույցների աշխատողների թվաքանակը

Պետական իշխանության մարմին	2018թ բյուջեով նախատեսված աշխատողների թվաքանակ	2019թ բյուջեով նախատեսված աշխատողների թվաքանակ
Գյուղ. Նախ	132	129
Մշ. նախ	131	131
Սպորտի և երիտասարդության հարցերի նախ.	79	83
Սփյուռքի նախ.	88	88
Բնական պաշարների և էներգետիկ ենթակառուցվածքների նախ., ներառյալ նաև ջրային կոմիտե	200	200
Ընդամենը 5 մարմինների աշխատողներ	**630**	**631**

Չնայած ակնհայտ է, որ նախատեսված փոփոխությունները վերաբերվում են միայն կառուցվածքային փոփոխություններին և խոսք չի գնում այդ 630 աշխատակցի կրճատման մասին, սակայն մենք փորձել ենք գնահատել 630 աշխատողի գծով տարեկան ծախսերը:

Նախաձեռնված բարեփոխումները առնչվում են շուրջ 630 աշխատողի, որոնց վրա պետբյուջեից ծախսվում է տարեկան շուրջ 2.2 մլրդ դրամ:

Միջինում պետական կառավարման համակարգում մեկ աշխատողի աշխատավարձի ֆոնդը (ներառյալ պարգևավճարը) կազմում է շուրջ 300000 դրամ, այսինքն պետական կառավարման համակարգում ներգրավված մեկ աշխատողին պետբյուջեից վճարվում է տարեկան միջինում մոտ 3.6 մլն դրամ:

Որքան ծառայողական ավտոմեքենա ունեն նշյալ կառույցները՞:

Պետական իշխանության մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը 2018թ բյուջեով նախատեսվում էր 902, իսկ 2019թ պետբյուջեով՝ 834 ավտոմեքենա:

Աղյուսակ 3. Պետական իշխանության մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի համեմատականն ըստ պետբյուջեի

	2018թ բյուջե	2019թ բյուջե
Պետական իշխանության մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը, հատ	**902**	**834**

Նշված 5 կառույցներին բաժին է ընկնող ծառայողական ավտոմեքենաների շուրջ 4 տոկոսը, տես աղյուսակ 4:

Աղյուսակ 4.Կառուցվածքային փոփոխություններում ներառված կառույցների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը

Պետական իշխանության մարմին	2018թ բյուջեով նախատեսված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը	2019թ բյուջեով նախատեսված ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը
Գյուղ. Նախ	10	8
Մշ. նախ	7	5
Սպորտի և երիտասարդության հարցերի նախ.	5	5
Սփյուռքի նախ.	5	5
Բնական պաշարների և էներգետիկ ենթակառուցվածքների նախ., ներառյալ նաև ջրային կոմիտե	13	11
Ընդամենը 5 մարմինների ծառայողական ավտոմեքենաներ	**40**	**34**

POLICYOBSERVER NCPPR

POLICYOBSERVER
NCPPR